Մարտունու համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «Մարտունի քաղաքի մշակույթի կենտրոն», «Ծակքարի մշակույթի կենտրոն», «Վարդենիկի մշակույթի կենտրոն», «Գեղհովիտի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոն զբաղեցնելու համար

22.07.2024

Հայտատու՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 10-րդ կետ

Մարտունու համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «Մարտունի քաղաքի մշակույթի կենտրոն», «Ծակքարի մշակույթի կենտրոն» , «Վարդենիկի մշակույթի կենտրոն», «Գեղհովիտի մշակույթի կենտրոն»,ՀՈԱԿ-ի տնօրենների թափուր պաշտոն զբաղեցնելու համար

«Մարտունի քաղաքի մշակույթի կենտրոն», «Ծակքարի մշակույթի կենտրոն», «Վարդենիկի մշակույթի կենտրոն », «Գեղհովիտի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոնների համար մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած, ՀՀ գործունակ այն քաղաքացիները, ովքեր ունեն՝

1/ բարձրագույն կրթություն

2/հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի 3. մասի 2) կետով սահմանված պահանջները

3/ իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն /ՀՀ Սահմանադրություն, Կրթության մասին ՀՀ օրենք, Աշխատանքային օրենսգիրք, Գնումների մասին ՀՀ օրենք, ՊՈԱԿ-ների մասին ՀՀ օրենք, համապատասխան ոլորտի ՀՀ օրենսդրություն և այլ իրավական ակտեր/

4/ տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

5/ ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

6/ աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ, ենթակաների հետ վարման անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն

7/ առնվազն մեկ օտար լեզվի իմացություն

Մրցույթը կկայանա օգոստոսի 22-ին ժամը 11-00-ին, Մարտունու համայնքապետարանում /հասցե՝ ք. Մարտունի Շահումյան 2

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.

2) 1 լուսանկար 3Х4 չափսի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5)անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի /արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները/.

6)տեղեկանք մշտական բնակության վայրից

7) հրապարակված հոդվածներից կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում.

8) մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 10- 00-ից մինչև 17-00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, Մարտունու համայնքապետարանում /ք. Մարտունի Շահումյան 2

Մրցույթների անցկացման վայրի, օրվա և ժամի հնարավոր փոփոխությունների մասին կհայտնվի լրացուցիչ՝ մրցույթից առնվազն մեկ շաբաթ առաջ: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝
077 77-91-27
Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2024 թվականի օգոստոսի 7-ն է:

Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ Ք,Մարտունի Շահումյան 2
Հեռ..՝ 077-77-91-27
Էլ. փոստ՝ ՝ info@martuni.am